

ՅԱԿԵԲ ՆԻԿՈԼԱՅԱՍՅԱՆՑ

ԱՆՀԱՏԱՏԱՐԻՄ

ՏԻՐՈՒՀԻՆ

ԳԻՆԸ 5 Կ.



Թ. Ի. Ա. Ի. Ա.

Ի Ս. Գրաճակայա փող, 6.

1011

891.99.

Գ. 40

891.99
8-70

ՅԱՐԱՐԵ ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆՑ

ԱՆՀԱՏԱՏԱՐԻՄ
ՏԻՐՈՒՀԻՆ

ԳԻՆԸ 5 Կ.



Թ Ի Ճ Լ Ի Ո

Տպարան «Ն Ե Ր Մ Է Ս» Գրաձևիպա փող., 6.
1911

46451

29546

891.99 Aufnahme
2-20 Währungsgruppe
applizieren

[illegible]

19 NOV 2019

ՅԵՌԵՋԵԲԵՆԻ ՏԵՂ

Ոտանաւորի վերածած սոյն պատմութիւնը մի ճշգրիտ իրողութիւն է, որ տեսել և միմեանց պատմելով տարածել են ականատեսները: Յայտնի է, որ կինը՝ որքան էլ կրթուած ու զարգացած լինի, համեմատաբար մի թոյլ էակ է, ամեն բանից շարժող, ամեն փայլից հրապուրւող:

Մարդկութեան ամենաառաջին արժանիքը նրա նամուսն է. նամուսնից ընկաւ, հեռացաւ մարդ թէ՛ Վին՝ կը նշանակէ նա դարձաւ անասուն: Ըստիս ~~ընդ~~ նշանուկութեամբ:

Սոյն պատմութեան մէջ գլխաւոր հերոս
մարդ-հրէշը Տիգօ Հաժմախոյեանցն է,
որ ներկայումս ծառայում է յայտնի հա-
րուստ մարդու կանտորում. դա ինչպէս
լսել ենք մանկութեան ընկերն է եղիւ
Տէր Սերոպին, միասին մեծացել, ու-
սումնարան գնացել, միասին սովորել,

միմեանց տուն գնացել եկել, միով բանիւ դռքա համարուել են իբրեւ ազնիւ աղուհացկեր ընկերներ և հարազատ եղբայրներ:

Տասնէնինգ տարի առաջ Տէր Սերոպն ամուսնանում է (աշխարհական ժամանակ) պատմութեանս հերոսուհի Սիւթանետի հետ, որ մի խեղճ ընտանիքի աղջիկ է, ծխական դպրոցում սովորած, իւր չափաւոր աշխատանքով կարողանում է պահել իր ընտանիքը համեստ կերպով և անգործ դրութեան մէջ: Սակայն այդ անդորրութիւնն երկար չի տևում. մի քանի տարի անցնելով յիշեալ Հաւծախողեանը սկսում է յաճախել այդ ընտանիքը: Նա տեսնելով մարդու համեմատաբար սուղ միջոցները և նրա կնոջ քիչ շատ գեղեցիկութիւնն ու պարզամտութիւնը՝ կամաց-կամաց խորամանկ օձի պէս մտնում է կնոջ երակները, նրա սիրտը գրաւում է և ձգում իւր ցանցի մէջ շնորհիւ իր փայլուն ոսկիների:

Տէր Սերոպը լինելով մի բարոյական մարդ և բոլորովին չը կասկածելով

Հաւծախողեանցի ազնութեան վերայ, թոյլ է տալիս նրան կնոջ հետ զբօսնել, նրան թատրոններ տանել և այլն:

Հետեանքը լինում է սոյն պատմութեան մէջ նկարագրուածը:

Տիրուհին իւր երկու աղջիկ երեխաներով բաժանւում է ամուսնուց և ապրում իւր ծնողների մօտ, նախապէս յուսալով և խոստում աւնելով Տիգօից, որ նա պէտք է հոգայ իրանց հարկաւոր պէտքերն ու ապրուստի միջոցները:

Համառօտակի պատմելով այս դէպքի իսկական եղելութիւնը՝ թողնում ենք ընթերցող հասարակութեան և մանաւանդ այդ յայտնի հարուստի ժառանգների և նրա կանտօրում ծառայողների խղճին ու արդար դատաստանին բարոյապէս փչացած Տիգօ Հաւծախողեանցի վերաբերմամբ:

Ի դիմաց ականատեսների՝

Շաւարշ Նիկողայոսեանց

Մի մեծ բաղրի տէր Սերոպը
Մտածմունքով ման է գալիս,
Իսկ նրա կին Սիւժանեստան
Տիգօին պաշ, սէր է տալիս:

Տաներկու տարի շարունակ
Սիւժանեստը քէֆ է անում.
Հաւժախողենց Տիգօի հետ
Պողրուչկով է միշտ ըզբօսնում:

Հէնց որ օրը մթնանում էր,
Սիւժանեստը դալտում էր
Մարդու հարցին. ուր ես գնում,
Մի տեղ կերթամ, նա ասում էր:

Թուրմէ Տիգօն բերը սրած,
Բուլվարումը սպասում էր.
Սիրեկանին երբ տեսնում էր,
Ֆայտօն վարձում, թուցնում էր:

Կաթուղիկաց գերեզմնոցում
Այդ երկու սիրահարները
Շուտ շուտ գնում, սէր են յայտնում
Խոտում նստում քէֆ են անում:

Վերայի հայ գերեզմնոցում,
Խարբուխում ու հեռու տեղեր
Երկու սրտով սիրածները
Գնում իրար սէր են յայտնում:

Մուշտայիդը ընդհուպ էր,
Սիւժանետն ու իր սև Տիգօն
Նստած ծառի շաքի տակ
Ջան ու ջիգրով խօսում էին:

Տանն էլ երբ որ մեր տէրտէրը
Չէր լինում կամ ուշանում էր,
Տիգօն գնում սիրեկնի մօտ,
Կողք կողքի նստում խօսում էր:

Սիւժանետը կլուր է գնում
Մարդուն բանի տեղ չի գնում,
Կէս գիշերից անց տուն գալիս,
Պառկում, քնում հանգստանում:

Մեր բաջ Տիգօն կլուրումը
Մութ տեղեր էր նստեցնում
Իրար քաղցր մատահաթներ,
Ջան ասում ու ջան են լսում:

Սիւժանետը ու իր Տիգօն
Այնտեղ մի լաւ ընթրում էին,
Յետոյ գնում նոմերներում
Հանգիստ սրտով քնում էին:

Իսկ միամիտ տէր Սերոպը
Դրանց քոյր ու եղբայր կարծում,
Թողնում ազատ, չէր հետևում,
Բայց հիմա ախ ու վախ քաշում:

Սրանից վեց, եօթ տարի առաջ
Սիւժանետը Մանգլիս գնաց,
Մի սիրուն որբ և այրու մօտ
Աղջկով հախերնիցա մնաց:

Երկար ժամանակ չանցկացած
Տէր Սերոպը այնտեղ գնաց,
Տեսաւ կնկան ու աղջկան
Ուրախ, գուարթ ու ժիր դարձած:

Մեր սիրահար Սիւժանետը
Երբ տեսնում է մարդու դէմքը,
Կնճիւղները վեր է թողնում,
Բարև տալիս, սառն ընդունում:

Նա չի թողնում մարդուն իւր մօտ
Հանգստանալ ու զիշերել,
Ուղարկում է ուրիշ տեղեր,
Պատճառ՝ թէ տեղ չունինք մեզ մօտ:

Տէր Սերոպը կոտրած սրտով
Երկու օրից տուն է դառնում,
Շատ մտածում, շատ դարդ անում,
Բայց մի հնար նա չի գտնում:

Մի քիչ ժամանակից յետոյ
Տիգօն ընծաներ է առնում
Փայտօն վարձում, Մանգլիս գնում
Սիրեկանին ուրախ տեսնում:

Սիւժանետը երբ տեսնում է
Սրտով սիրած իւր Տիգօին
Ուրախ, ուրախ թռչկոտում է
Փաթաթւում ու համբուրում է:

Այնուհետև ամենայն օր,
 Երկու սիրուած էակները
 Բոշշա գնում, սիրաբանում
 Ուշ գիշերին տուն են դառնում:

Այնտեղ՝ Մանգլիսի բոշշայում
 Սասնաների ծառերի տակ
 Պառկում միասին ջան ասում,
 Ու հետն էլ հանաքներ անում:

Տիգօն իր քեֆերն անելով
 Քանի օրից դառնում է տուն
 Սիւժանետն էլ տխուր սրտով,
 Արտասուքով ճամփայ դնում:

Ամառանոցից դառնում է
 Տէրտէրակին Սիւժանետը
 Սիրեկանին նա տեսնում է
 Յիշում երջանիկ ժամերը:

Բոշշայում զրանց միանալուց
 Սիւժանետը յղանում է
 Մարդուց պահում, բան չէ ասում,
 Սիրեկանին է նա յայտնում:

Ժամանակով բաղինիցում
 Աղջիկ որդի է նա բերում,
 Ուրախանում, պաշպչում է
 Սիրելի Տիգօին յիշում:

Տիգօն պիրօժնի առնելով
 Գնում է տես՝ իւր սիրուհուն,
 Համբուրում է ծիծաղելով,
 Նման պտուղը տեսնելով:

Երեսայի դէմքի գոյնը
 Ամբողջապէս իրա նման
 Աչք ու ունքը իւր կօպիօն
 Թերթերունքը միանման:

Բաղիրնիցում Տիգօն շուտ շուտ
Այցելում էր իւր սիրուհուն,
Կանֆէտ տանում, քաղցր խօսում,
Ջան ասում ու ջան էր լսում:

Երեխային շատ էր սիրում
Մայրը՝ որ իւր սիրեկնից էր
Տիգօն էլ ընծաներ բերում
Մարդու աչքին թող էր փչում:

Մի քանի տարի անցնում է
Սիւժանետը յղանում է
Տիգօն հիմա փող է ծախսում,
Ամօթից առաջն առնում է:

Ուղարկում է բժշկի մօտ,
Նա շատ ոսկիներ է ծախսում
Յղութեան առաջը կտրում,
Դեղով վիժեցնել է տալիս:

Տասներկու տարուայ ընթացքում
Տիգօն իւր ոռճկի մի մասը,
Ծախսի համար ուրախ բերում,
Իւր Սիւժանետին էր յանձնում:

Սիւժանետն էլ այդ փողերով
Թանկագին գլխարկ էր առնում,
Շորեր կարում մօզաներով
Ու ման գալիս կոտրատելով:

Թատրոններում էլ տանում էր
Բալերում ու զբօսանքներում
Եւ միշտ թեանցուկ զբօսում էր,
Քչփչում ու սիրաբանում:

Նորա տուած ոսկիներով
Սիրուհին դաշա էր դնում,
Մօր հետ ժամանակ անցկացնում
Գալիս Տիգօն էր փարւում:

Տիգօն մի ոսկէ մատանի
Իւր բրկեանոէ մի մեծ աւոյ
Գնեց, բերեց ու ընծայեց
Սիրած Սիւժանետին սրտով:

Տիգօն մի մեծ վաննա գնեց
Եւ ուղարկեց Սիւժանետին,
Իսկ նրա մարդուն նա խաբեց
Թէ ինձ համար երկուսն ունիմ:

Իր ծառայած հին կանտօրում
Մի ումիւրնիկ էր զրած,
Վերցրեց ու նորոգել տուեց,
Իւր սիրունուն ընծայ զրկեց:

Ելի ուրիշ ընծաներ էլ
Տիգօն տալիս էր անխռով,
Կօշիկների համար կաշի
Եւ շատ տեսակի զարդեր էլ:

Նոր տարուն թանկ բանքաներկա
Անուան տօնին տուալէտի սարք
Դէյրացու, ձեռքի սակվայած,
Սիրուն պաղարկաներ մի կարգ:

Սիւժանետի մայրը տրկար
Հիւանդանոցում պարկեցաւ,
Փեսան խռով զոքանչի հետ,
Տես ու ճանաչ Տիգօն դարձաւ:

Այդ պատճառով զոքանչը շատ
Միակ փեսային ատում էր
Իսկ փչացած Տիգօն պէս
Մարդուն յարգում ու սիրում էր:

Սիւժանետի ծնողները
Աղջկան պաշտպանում էին,
Նորա վարած այդ ցոփ կեանքը
Գովում և հաւանում էին:



29546-61

Տիգօի փողերի համը
Տեսել ու ճաշակում էին,
Որովհետև իրանք աղքատ,
Ապրուստի միջոց չունէին:

Նրանց բռնած տանու վարձը
Տիգօն զրպանից էր տալիս
Ու հազած հագուստի գինն էլ
Աղջկայ միջոցով գալիս:

Ձուածեղի խաթեր համար
Ամանի կոթն են լստում,
Տիգօն գիտէր ասուածքի միտք,
Հէնց այդ մտքով էր կատարում:

Ձեռքից եկած օգնութիւնը
Տալիս էր ուրախ ամենքին
Սիւժանետի ծնողներին,
Նոյնը տէր Սերոպին նեղ տեղ:

Խաղէինի ձիոց համար
Խոտի պաշար էր հարկաւոր
Սիւժանետի հայրը պատրաստ
Գնում էր միշտ յարմարաւոր:

Փողի կարիք ունէր տէրտէր,
Միամիտ գիմում էր նրան,
Տիգօն ձեռքը տանում զրպան,
Տալիս էր հարկաւոր գումար:

Տիգօն ուզում էր պսակուել
Նա գտնում է որբ և այրի,
Երկար հասակ, սիրուն դէմքով,
Առողջ կազմով և շատ փողով:

Սիւժանետը խմանալով
Տիգօի մտադրութիւնը
Հեկեկալով լաց է լինում
Ամուսնութիւնը խանգարում:

Ձէոր դու ինձ խօսք ես տուել
Ընդմիշտ սիրել, հետս ապրել,
Այժմ քո այդ վարձունքովը,
Ուզում ես իմ զլճիւր կտրել:

Սիւժանետի այդ խօսքերը
Աղբում են Տիգօի վրայ
Մտադրութիւնը փոխում է
Այն կնոջից հեռանում է:

Դժառուայ օրերից մէկում
Սիւժանետը իւր ամուսնուն
Խնդրում է Ձեզուի ուղարկել
Քիչ հանգստանալ է ուզում:

Տէր Սերոպն էլ կատարում է
Կնոջ խնդիրն անմիջապէս,
Նա երեխանցով տանում է
Տոմսակ առնում ճամփայ ձգում:

Քանի օրից դառնում են տուն
Սիւժանետն ու իր երեխայք,
Տէր Սերոպը միշտ անդնջում
Հարց է տալիս, ո՞վ կար այնտեղ:

Երեխանցից իմանում է
Որ Տիգօն էր այնտեղ լինում,
Մայր էլ միւս օրը զընում է
Եւ միասին լաւ քէֆ անում:

Սիւժանետը առաջուանից
Իմաց է տալիս Տիգօին
Որ ինքը գնում է գիւղը
Իրան էլ կսպասեն ճաշին:

Տիգօն էլ իւր գործը թողած,
Զակուսկեղէն ու կանֆէաներ
Առնում, գնում ու չի թողնում
Սիրեկանի սիրտը կտորած:

Անցեալ տարուայ մայիս ամիսին
 Սիւժանետը ճաշ է տալիս,
 Իւր փոքրիկ աղջկայ ծննդին,
 Կանչում է բարեկամներին:

Ճաշից մի քիչ առաջ գալիս
 Մարդու մօտը կանգնում, ասում
 «Շուտով նամակ գրիր կանտօր,
 Տիգօին հրաւիրիր այսօր»:

Մարդու կասկածը շատացաւ
 «Ձեռն ուզում կանչել, նա ասաւ,
 Կինը աչքերը խոփոռած
 Ինչո՞ւ, խամ չէ նա մեզ, ասաց:

Մարդն էլ ստիպուած տոմսակ գրեց
 Տիգօին ճաշի հրաւիրեց,
 Թէպէտ այն օր ճաշի չեկաւ,
 Բայց երեխին ընծայ զրկեց:

Այն օրուանից տէր Սերոպի
 Կասկածներն աւելանում են,
 Սիւժանետն էլ նկատում է
 Արարմունքներն յայտնում են:

Մի օր Տիգօն հրաւիրուած էր
 Սիւժանետի տանը ճաշին
 Ճաշից յետոյ ուրախ տանում
 Իւր անկողնումն է պառկեցնում:

Անցեալ ամառուայ շոգերին
 Սիւժանետը երեխանցով
 Գնաց Կրծանիսի բաղը,
 Օդ ծծելու մի փոքր զով:

Պարզ է Տիգօն պէտք է լինէր,
 Առանց նրան լաղաթ չունէր,
 Չէ՞ որ երկուսն էլ կապուած են
 Իրար հետ ջերմ, անհուն սիրով:

Տիգօն առնում է խմիչքներ
 Լիմօնադներ ու զեխտերներ
 Տեսակ, տեսակ զակուսկաներ
 Լօքօ, փաշա ու սուկիններ:

Մեր միամիտ տէր Սերոպը
 Հիւր է գնում նրանց մօտը,
 Կինը մարդուն տեսնում, փոխում
 Ախորժակն էլ է կորցնում:

Ճաշից յետոյ Սիւժանետը
 Իւր ներքին սպիտակ շորերով
 Կուշետիկի վերայ պառկելով
 Գլորում է չը քաշուելով:

Տէր Սերոպը ուշ իմացաւ,
 Որ իւր կինը անառակ է,
 Նոր ի նորոյ նա հասկացաւ,
 Որ Տիգօն էլ խաբերայ է:

Նա Տիգօյին ընդունում էր
 Իբրեւ եղբայր մօտ բարեկամ
 Եւ իւր սրտի զաղտնիքները
 Պարզ, համարձակ նա յայտնում էր:

Սիւժանետից էլ չէր սպասում
 Որ իրան կը դաւաճանէ,
 Հագուստ, պճրանք, ոսկու խաթեր
 Իրա մարմինը կը ծախէ:

Ի՞նչ կը կարծէր, որ Տիգօն է
 Լիրը, անամօթ, հրէշ, աւազակ
 Իրան մօտիկ ձեւացնում է
 Իսկ իւր կնկան նա սիրում է:

Ի՞նչ կը մտածէր, որ իւր կինն էլ
 Անառակութիւն է անում,
 Որ նա շատ է մարդուն խաբել,
 Ու հարուստ Տիգօին սիրում:

Սիւժանետաի համբերութիւն
Գազաթնակէտին է հասել,
էլ չէր ուզում մարդուն տեսնել,
Այլ իւր Տիգօի հետ ապրել:

Անցեալ տարուայ հոկտեմբերին
Մի օր բռնում է Տիգօին,
Ազաչում է ու պաղատում,
Նորա հետ ապրել է ուզում:

Տիգօի ծնողք ու քոյրերը
Սիւժանետին շատ ատում են,
Եւ չեն ուզում, որ իրար հետ
Խօսեն, ման գան, սիրարանեն:

Այդ պատճառով Տիգօն հանգիստ
Իւր սիրելի Սիւժանետին
Խնդրում է մարդուց հեռանալ՝
Եւ ծնողների մօտ մնալ:

Իսկ եթէ նա այդ չէ ուզում,
Իրեն առանձին տուն վարձէ
Եւ իւր երկու աղջիկներով,
Ազատ, համարձակ բնակուէ:

Ապրուստը նա խոստանում է
Իրա միջոցներից հոգալ,
Ու ամեն կէրպ յոյս է տալիս
Յվերջ իւր հետ ապրել, մնալ:

Սիւժանետն այդ խոստումները
Անկեղծ սրտով ընդունելով,
Նոյն ամսին կանչում է մօրը
Տէր Հօր տանը չեղած օրը:

Մարդուց ծածուկ հաւաքում է
Իւր տան իրերի մեծ մասը,
Մշակներով ուղարկում է,
Մօր հետ ծնողների տանը:

Մարդը երբ որ իմանում է
 Կնոջ արած այս բաները,
 Նա բարկութեամբ հարցնում է
 Ի՞նչ են նորա արածները:

Սիւժանետը թթուած դէմքով
 Մարդու երեսին չէ նայում,
 «Հիւանդ եմ ես, հօրանցս տուն
 «Քիչ հանգստանալ եմ ուզում»:

Այս է լինում պատասխանը
 Երկու երեսային առնում,
 Ու զիշերը կառք վարձելով,
 Գնում է հօրանց տուն ապրում:

Արդէն ինն ամիս է անցել,
 Մարդ ու կին բաժան մնացել,
 Կինը հօրանց տանն է ապրում
 Տէրտէրն իւր համար առանձին:

Երկու տարի առաջ նոյնպէս
 Կինն հեռացաւ մարդուց Մոյնպէս
 Տիւզօն գնաց ու համոզեց
 Սիւժանետին բարիշացրեց:

Տիւզօն դեռ իւր խոստման տէրն է
 Յաճախ գնում այցելում է,
 Մուշտայիդ էլ նա տանում է,
 Մողնի շորեր էլ առնում է:

Փողեր դարձեալ նա տալիս է
 Զի թողնում կարօտ մի բանին,
 Իւր սիրուհուն կշտացնում,
 Բաւականութիւն ըստանում:

Իւր նման փոքրիկ աղջիկն էլ
 Տոմսերով ապահովուած է,
 Որոնց տարուայ տսկոսները
 Ապրուստ, հագուստ, ուսման վարձ է:

Այդ պատճառով Սիւժանետը
Մարդուց կռակէկ չի պահանջում,
Ապրուստ հազուստ, երեխայոց
Ուսման վճար նա չէ ուզում:

Այժմ նորա մտածում են
Տէրտէրին մի օյին անել,
Որ իբր իրանք պսակուելով՝
Կարենան կեղտերը ծածկել:

Մենակ Սիւժանետին չէր որ
Տիգօն մօտեցաւ ու սիրեց,
Նա իւր ոսկիներէ շնորհիւ
Շատերին խելքահան արեց:

Էլ ի՞նչ կանէր ամուսնանալ,
Հոգսերի տակ ծանրաբեռնուել,
Քանի ընկերների կանանց,
Կարող էր իւր ցանցը ձգել:

Այդպէս իբր ու անզգամին
Հարկաւ մաս-մաս անելու են,
Եղբօր օջախն անպատուողին՝
Կրակի մէջ խորովելու են:

Հազարից մի դէպք կը լինի
Տէրտէրակինը բաժանուի,
Ուրիշին սիրէ, փշանայ
Մարդուն թողնէ ու հեռանայ:

Լիրբ ու վատ տիրուհիներին
Գլուխն ի վայր կախելու են,
Անարգ ձևով, տանջանքներով
Շան հէտ հաւասարացնելու են:

Տէր Սերոպը մեզաւոր էր,
Իր կնոջը խիստ կը պահէր,
Սիրելու ժամանակ սիրէր,
Տեղը ընկած նա սլինդ բռնէր:

Այժմ տէրտէրը շարունակ
Տխուր, տրտում և միայնակ,
Ապրում է, բայց անմխիթար,
Կին-ընկերից դաւաճանուած:



ՀՀ Ազգային գրադարան



NL0347630

50x

46451